
**ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ԳՐԱԲԱՐ ԲՆԱԳՐՈՒՄ
ԳՈՐԾԱԾՎԱԾ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ**

ԹՈՍՈՒՆՅԱՆ Գ. Բ.

Դարձվածաբանությունը բառը ծագում է հունարեն *phrasis* (արտահայտություն, խոսքի հատված) և *logos* (գիտություն, ուսմունք) բառերից: Այն ուսումնասիրում է լեզվի դարձվածքները, նրանց ծագումը, կառուցվածքը, տեսակները և դերը նախադասության կազմում:

Դարձվածաբանության գիտական ուսումնասիրությունն սկսվում է շվեյցարացի լեզվաբան Շարլ Բալիից (1865-1947): Դարձվածքները բավական լավ են ուսումնասիրված նաև ռուս լեզվաբանների՝ մասնավորապես Վինոգրադովի, Շանսկու, Վալգինայի և այլոց կողմից²:

Հայերենում դարձվածքներին առաջինն անդրադարձել է Մխիթար Սեբաստացին իր բառարանում³: Այնուհետև դարձվածքներն ավելի հանգամանորեն են քննել Նոր հայկազյան բառարանի հեղինակները⁴: Նրանք այս կամ այն բառով կազմված բառակապակցությունները (կայուն և ոչ կայուն) տվել են տվյալ գլխաբառի տակ՝ զծիկով: Հետագայում Մ. Ավգերյանն ավելի ընդգրկուն կերպով է ներկայացրել գրաբարի բառակապակցությունները իր Առձեռն բառարանում (Վենետիկ, 1865): Բառակապակցություններին բավական մեծ տեղ է հատկացրել նաև Ստ. Մալխասյանցն իր քերականագիտական աշխատանքներում և քառահատոր բացատրական բառարանում⁵: Նա առանձնացրել է գրաբարի, միջին հայերենի և աշխարհաբարի բառակապակցություններն ու դարձվածքները:

Ժամանակակից հայերենի դարձվածքները հետազոտության հատուկ նյութ են դարձրել լեզվաբաններ Ա. Մուրվալյանը, Ե. Գևորգյանը, Պ. Բեդիրյանը, Ա. Սուքիասյանը, Ս. Գալստյանը և ուրիշներ⁶: Նրանցից ավելի քան մեկ

¹ Балли Ш. Французская стилистика, М., 1961.

² Виноградов В. В. Русский язык, М., 1947. Шанский Н. М. Фразеология русского языка, М., 1963. Валгина Н. С., Розенталь Д. Э., Фомина М. И., Цапкевич В. В. Современный русский язык, М., 1966.

³ Մխիթար Սեբաստացի, Բառգիրք հայկազեան լեզուի բաժանեալ յերկուս հատորս, Վենետիկ, 1749-1769:

⁴ Տե՛ս Աւետիքեան Գ., Միրսելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

⁵ Մալխասեանց Ստ., Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892: Հայերէն բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1944-1945:

⁶ Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն (Ե., 1959), Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները (Ե., 1969), Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն (Ե., 1973), Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

տասնամյակ անց արդի հայերենի դարձվածային միավորները կառուցվածքային վերլուծության է ենթարկել լեզվաբան Խ. Բաղիկյանը⁷:

Դարձվածքը բառակապակցության մի տեսակն է, իսկ բառակապակցությունը նյութական իմաստ ունեցող երկու և ավելի բառերի կապակցություն է, որի կազմում բաղադրիչները միմյանց հետ կապվում են քերականորեն և իմաստով, օրինակ՝ արեգակն արդար, երկիր պագանել Աստուծոյ, քարկոծ առնել, կլանել զօդս և այլն:

Դարձվածքը ազատ բառակապակցությունից տարբերվում է նրանով, որ դրա բաղադրիչները սերտորեն են կապվում միմյանց հետ և արտահայտում են փոխաբերական իմաստ, օրինակ՝ աղօթս մատուցանել, գերի վարել, ժամ դնել, ծունր կրկնել, ի ծունր իջանել և այլն: Բնագրային օրինակներ. «Առ ոտն կոխէիք զարդարն առնելով փոխանակս» (Ամով, Ե 12)⁸՝ տրորել, ոտնակոխ անել: «Ոչ կարեմ ժոյժ ունել նմա» (Ա Մակ., Է 25)՝ դիմադրել: «Վասն որոյ եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց ... զի յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի»՝ խոնարհվել (Փիլիպ., Բ 10):

Ինչպես բառակապակցությունը, այնպես էլ դարձվածքը նախադասությունից տարբերվում են նրանով, որ ամփոփ միտք չեն արտահայտում, այսինքն՝ դրանք ստորոգում չունեն, իսկ նախադասությունն ունի, օրինակ՝ ընդ աղեղն մտանել (դարձվածք՝ առանց ստորոգման)՝ լարել, իսկ «Եւ եմուտ ընդ աղեղնն ձեռօք իւրովք» (Դ Թագ., ԺԳ 16). այստեղ դարձվածքն ունի ստորոգում՝ լարեց:

Առաջացման տեսակետից դարձվածքները նախ կազմավորվում են ժողովրդախոսակցական լեզվում և ապա գրականության միջոցով թափանցում են գրական լեզու: Այս ճանապարհով մեծ քանակությամբ դարձվածքներ գրական լեզվին են փոխանցվել Աստվածաշնչի միջոցով, այսպես, օրինակ՝ ազդ առնել լինել, ակն դնել, աղաղակ բառնալ, աղօթս առնել՝ մատուցանել, այսն առնել, այց առնել, անտես առնել, ապստամբ լինել, ընդ առաջ գնալ ելանել, առ ոտն կոխել, աւար առնուլ՝ հարկանել, բակ առնուլ, բնաջինջ առնել լինել, ի բուռն արկանել, գահավեժ առնել՝ լինել, գանալից լինել, գան ըմպել հարկանել, գերի առնուլ՝ վարել, ի գուճս իջանել, գուն գործել, դաշինս կռել, դատ առնել, ի փախուստ դառնալ, թագ դնել, երկիր պագանել, զահի հարկանել, զմտաւ ածել, զտեղի առնուլ, ձեռներէց լինել և այլն: Այս դարձվածքները հիմնականում կազմված են այս կամ այն բայով և որևէ խոսքի մասին պատկանող բառով: Բայական անդամի դերում հիմնականում հանդես են եկել առնել, լինել, առնուլ բայերը: Բայց գործածվել են նաև ունել, բառնալ, մատուցանել, գնալ, երթալ, կոխել, հարկանել, արկանել, ըմպել, վարել, իջանել, գործել, կռել, դառնալ, պագանել, ածել և այլ բայեր: Շատ դարձվածքների կազմում որպես բաղադրիչ հանդես է եկել նաև որևէ նախդիր: Աստվածաշնչից

⁷ Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները (կառուցվածքային վերլուծություն), Ե., 1986:

⁸ Ասուածաաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1805, Կոստանդնուպօլիս, 1895:

բերենք բնագրային մի քանի օրինակներ. «Եւ արդ աղօթս արարէք վասն իմ առ Տէր» (Ելք, Ը 28): «Ոչ թողից զբեզ եւ ոչ անտես արարից» (Յեսու, Ա 5): «Յուդա ... յանկարծակի զամենայն քաղաքն ի բուռն առնոյր» (Ա Մակ., Ե 28):

Դարձվածքների կազմում չեզոք սեռի բայերի մոտ գոյականական անդամը դրվում է ուղիղ ձևով, օրինակ՝ ազդ լինել, այգ լինել, զօրածողով լինել և այլն: Այսպես՝ «Ազդ եղեւ նմա եւ ասեն, Մայր Քո եւ եղբայր Քո կան արտաքոյ եւ կամին զՔեզ տեսանել» (Ղուկ., Ը 20): «Այնպէս եղիցի մեծութիւն ամենայն հեթանոսաց, որ զօրածողով եղեն ի վերայ Երուսաղեմի եւ ի վերայ լերին Միռնի» (Եսայի, ԻԹ 8):

Իսկ ներգործական սեռի բայերի մոտ գոյականը դրվում է հայցական հոլովով, օրինակ՝ ակն դնել, աղօթս առնել, աղաղակ բառնալ, աւար առնուլ, բակ առնուլ, գերի վարել, դաշինս կռել, թագ դնել, զտեղի առնուլ և այլն: Բնագրային օրինակներ. «Ամպարիշտք ... բարեկամ համարեցան զնա, եւ հալեցան եւ դաշինս կռեցին ընդ նմա» (Իմաստ., Ա 16): «Ոչ ոք ի նոցանէ յանձն առ թագ առնուլ եւ ծիրանիս արկանել՝ զի հաստատեցի տէրութիւնն» (Ա Մակ., Ը 14): «Ժամ եղեալ նմա օր մի, եկին ի վանսն առ նա բազումք» (Գործք, ԻԸ 23):

Իսկ երբ գոյականական անդամը նախդրավոր բառ է լինում, այն կարող է դրվել տարբեր հոլովներով, ինչպէս, օրինակ, «Եւ ապրեցո՛ զիս ի ձեռաց եղբօր իմոյ Եսաւայ. զի զահի հարեալ եմ ես ի նմանէ» (Ծննդ., ԼԲ 11)՝ տրական հոլով: «Բարկացան նոքա ի մէնջ, ի վեզ եկին եւ արարին զայս ամենայն» (Ա Մակ., Զ 59)՝ հայցական:

Դարձվածքների կազմում գերադաս անդամը կարող է դրվել ոչ միայն բայով, այլ նաև այլ խոսքի մասերով, իհարկե, ամենից շատ գոյականով ու բայով, այսպէս՝ Գառն Աստուծոյ, Որդի մարդոյ, երգ երգոց, երկիր աւետեաց, ունայնութիւն ունայնութեանց, սողոմ-գոմոր, ձայն բարբառոյ յանապատի, սրբութիւն սրբոց, որդան կարմիր, աղաղակ առնել, յաղերս անկանել, աղօթս առնել, ասպատակ դնել, աւետիս տալ, բուռն անկանել, գերի վարել, գրաւ դնել, թագ դնել, երկիր պագանել, զմտաւ ածել, ժամ դնել, ի գուճս իջանել, խնամ տանել, խորհուրդ առնել, հրոյ ճարակ տալ և այլն:

Զգալի թվով դարձվածքների կազմում անվանական բաղադրիչն արտահայտվում է ածականով, ինչպէս, օրինակ՝ այսաբեկ լինել, անարատ առնել, անգաւակ առնել, ատելի առնել, արժանի լինել, բարի առնել, զգոյշ լինել, զուարթ կալ, ընդունելի լինել, խելամուտ առնել, հեռի առնել՝ լինել, քաւիչ լինել և այլն:

Կան նաև մակբայական գերադաս անդամով բառակապակցություններ ու դարձվածքներ, ինչպէս՝ առաջի առնել, փիհբերան լինել, բարւոք առնել, ի բաց առնուլ, ընդ վայր հարկանել, կոր ի գլուխ առնել և այլն:

Դարձվածքների առաջացման հիմքում ընկած են լինում զանազան երևույթներ, հասկացություններ միմյանց հետ համեմատելը, զուգորդելը, հակադրելը և այլն: Օրինակ՝ ձայն բարբառոյ յանապատի, այսինքն՝ այնպէս,

ինչպես որ անապատում խոսողին լսող չկա, որովհետև մարդ չկա: Կամ՝ «Հորդան ետ որպես խաշին՝ ժողովրդեան իւրոյ, եւ եհան զնոսա որպէս հօտ յանապատ» (Մադւնոս, ՀԷ 52): «Եւ իցէ քերորէիցն տարածեալ զթեւս իւրեանց ի վերուստ, եւ հովանի ունիցին թեւօք իւրեանց ի վերայ քաւութեանն» (Ելք, ԻԵ 20): «Հրաման ետ Աստուած դրմենոյն, եւ ել ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել նմա հովանի ի վերայ գլխոյ նորա» (Յովնան, Դ 6): «Արդ եղիցի կոխան իբրեւ զկաւ ի ճանապարհի» (Միքիէ, Է 10):

Աստվածաշնչի միջոցով մեծ թվով դարձվածքներ են անցել գրական լեզվին, որոնք պահպանվել են մինչև օրս, այսպես, օրինակ՝ Աստուած մի՛ արասցէ, զլուխ գործոց, երգ երգոց, երկիր աւետեաց, ունայնութիւն ունայնութեանց, տէր ընդ քեզ՝ ձեզ, միով բանիւ, ձայն բարբառոյ յանապատի, ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձայն բազմաց ձայն Աստուծոյ, յականէ յանուանէ, յաւուր պատշաճի, խղճի մտօք, յաւիտեանս յաւիտենից, սրբութիւն սրբոց, բաբելոնեան աշտարակաշինութիւն, սողոմ-գոմոր, քաւութեան նոխազ և այլն:

Աստվածաշնչում կան բազմաթիւ դարձվածքներ, որոնք շատ վաղուց արդէն ունեին իրենց համանիշ համադրական ձևերը, ինչպես, օրինակ՝ աղօթս առնել – աղօթել, աղաղակ առնել՝ բառնալ – աղաղակել, ակնարկի առնել – ակնարկել, ակն ունել(իւ)-ակնկալել, անպատիւ առնել – անպատուել, աւետիս տալ – աւետել, բողոք բառնալ – բողոքել, բնաջինջ առնել – բնաջնջել, գերի առնուլ՝ տանել – գերել, երկիր պագանել – երկրպագել, զմտաւ ածել – մտածել, ակն ածել – ակնածել, լուսաւոր առնել-լուսաւորել, սակ արկանել – սակարկել, օրինակ՝ «Եւ ետես Մաւուդ թէ այնչափ իմաստուն է յոյժ, ակնածէր յերեսաց նորա» (Ա Թագ., ԺԸ 15): «Ակնկալեցի իբրեւ զանձրեւ բարբառ իւ, եւ իջցեն իբրեւ զցօղ պատգամք իւ» (Բ Օր., ԼԲ 2) և այլն:

Բայց Աստվածաշնչում գործածության ավելի բարձր հաճախակա-նություն ունեն հարադրական կազմությունները, որոնք արտահայտում են ավելի նուրբ իմաստներ, օրինակ՝ «Արդ զսա ակն ունիմ արձակել՝ որպէս նոյնհետայն զանձնէ ստուգեցից» (Փիլիպ., Բ 23)՝ մտադիր եւ:

Աստվածաշնչում գործածության բարձր հաճախականություն ունեն երկանդամ դարձվածքները, ինչպես, օրինակ՝ ազդ առնել, ակն դնել, յաղօթս կալ, ամբաստան լինել, այց առնել, անտես առնել, աշխատ առնել, ասպաստան առնել, բակ առնուլ, բնաջինջ լինել, գութ անկանել, գուն գործել, զահի հարկանել, զօրածողով լինել և այլն: Բերենք բնագրային մի քանի օրինակ. «Եւ աղաղակեցին բարապանքն, ազդ արարին ի տուն թագաւորին ի ներքս» (Դ Թագ., Է 11): «Թո յլ տուք դմա, զի՛ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց դա յիս» (Միքաք, ԺԴ 6): «Զօրածողով լինէր յամենայն աշխարհաց» (Ա Մակ., Գ 27):

Աստվածաշնչում երբեմն հանդիպում ենք եռանդամ դարձվածքների, օրինակ՝ բուռն դէտ ունել, դէտ ակն ամբառնալ, զահի զամօթի հարկանել, ծափ զծափի հարկանել, կոր ի զլուխ առնել, հարկ յանձին կալնուլ, հարց եւ փորձ

լինել՝ առնել, հող ի գլուխ լինել, հրոյ ճարակ տալ, ձեռն ի գործ առնել՝ արկանել, փոյթ ի մէջ առնուլ, փոյթ յանձին ունել և այլն: Ինչպէս երևաց վերոբերյալ օրինակներից, Աստվածաշնչում քառանդամ դարձվածքների չենք հանդիպում: Բայց ավելի մեծ տեղ են գրավում նախդրավոր կազմությամբ դարձվածքները, այսպէս՝ առ աչօք լինել, առ ոտն կոխել, ընդ առաջ երթալ, ի բաց գնալ, գայլ ի բերան, ի գուճս իջանել, ի գուճս տալ, ի փախուստ դառնալ, ի դիմի հարկանել, զմտաւ ածել, զտեղի առնուլ, ընդ հակառակս ելանել, ձեռն ի գործ առնել, ի միտ առնուլ, ի մտի դնել, յամօթ առնել, ի սպասու կալ, օր ըստ օրէ, զբռամբ արկանել, ընդ քիրտն մտանել և այլն:

Դարձվածքները շատ կարևոր դեր են խաղում լեզվում. դրանք ունեն հուզաարտահայտչական նշանակություն ու ոճական լայն կիրառություն: Եվ քանի որ դարձվածքն ունի փոխաբերական իմաստ, դրանով պայմանավորված՝ այն խոսքին տալիս է պատկերավորություն՝ օրինակ՝ «Ակն եդ նոցա հայեցուածովք աչաց իւրոց» (Եզեկ., ԻԳ 16)՝ աչք դրեց: «Ապստամբ եղեն յուխտէ կտակարանացն սրբութեան» (Ա Մակ., Ա 16)՝ շեղվեցին: «Յոր եւ աղօթս առնենք վասն ձեր յամենայն ժամ, զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն Աստուած» (Բ Թեսաղ., Ա 11)՝ արժանացնի: «Թերեւս անկցի գուր ի սիրտ նոցա առաջի Տեառն, եւ դարձցին իւրաքանչիւր ի ճանապարհաց իւրեանց չարաց» (Երեմ., ԼԶ 7)՝ գթան: «Եւ անդ դուլ եւ դադար քեզ ոչ գտանիցի» (Եսայի, ԻԳ 13)՝ հանգիստ չես գտնի: «Ոտնհար եղեց՝ յորժամ գայցէ ձեզ նեղութիւն եւ պաշարումն» (Առակք, Ա 26)՝ պիտի ծիծաղեն: «Ամենայն թշնամիք իմ լուան զչարիս իմ եւ ոտն հարին զիս» (Ողբք Երեմ., Ա 21)՝ ոտնահարեցին, արհամարհեցին և այլն:

Աստվածաշնչյան դարձվածքները կարելի է դասակարգել նաև ըստ իրենց արտահայտած իմաստների: Ըստ այդմ, դարձվածքները կարող են լինել մենիմաստ, բազմիմաստ և հոմանիշ: Բերենք մենիմաստ դարձվածքներով նախադասությունների օրինակներ. «Եւ արդ աղօթս արարէք վասն իմ առ Տէր» (Ելք, Ը 28)՝ աղօթեցէք: «Այլ դու գուա ըթ կաց յամենայնի» (Բ Տիմ., Դ 5)՝ ուրախացի՛ր: «Եւ տարան զնա ի խաչ հանել» (Մատթ., ԻԷ 31)՝ խաչելու:

Հոմանիշ դարձվածքների օրինակներ. ձեռն ի գործ առնել – ձեռն ի գործ արկանել (սկսել), յայտ առնել – յայտ ածել (հայտնել), յետս դառնալ – յետս կալ (հետ դառնալ, վերադառնալ), պահ արկանել – պահ դնել (պաշարել), ոխս ունել – ոխս պահել (թշնամաբար տրամադրվել), ունկնդիր լինել – ունկն դնել (լսել, հնազանդվել), պատասխանի առնել – պատասխանի տալ (պատասխանել), վրէժ առնուլ – վրէժ խնդրել (վրէժ լուծել), ի փախուստ դառնալ – ի փախուստ գնալ (փախչել), ի փախուստ առնել – ի փախուստ մատնել դարձուցանել (փախցնել, հալածել) և այլն: Բնագրային օրինակներ. «Ձեռն ի գործ առնէին, ի փախուստ դարձուցանէին» (Ա Մակ., Դ 14): «Սկսաւ

ձեռն ի գործ արկանել եւ սկիզբն առնել գործոցն չարութեան՝ արամբ միով» (Բ Մակ., Դ 40):

Մեր Տիրոջ համար գործածուել են հետևյալ հարադրական և համադրական հոմանիշ ձևերը՝ Յիսուս, Տէր, Տէր Յիսուս, Տէր Աստուած, Տէր ամենակալ, Տէր բարերար, Տէր բարձրեալ, Քրիստոս, Տէր Քրիստոս, Յիսուս Քրիստոս, Քրիստոս Աստուած, Փրկիչ, Ամենափրկիչ, Մեսիա, Օծեալ, Միածին, Աստուածամարդ, Բանն Աստուած, Որդի Աստուծոյ, Աստուածորդի, Մարդորդի, Տեառնորդի, Որդի մարդոյ, Որդի Դաւթի, Հովուապետ, Քահանայապետ և այլն:

Աստվածաշնչում գործածվել են նաև բազմիմաստ դարձվածքներ, այսպես՝ «Բքրել լսէ զբանն եւ ի միտ առնու, եւ տայ զպտուղ» (Մատթ., ԺԳ 23)՝ հասկանում է, իսկ՝ «Եւ կոչեալ առ ինքն զամենայն ժողովուրդն՝ ասէ ցնոսա. Լուարո՛ւք ինձ ամենեքեան եւ ի միտ առէք» (Մարկ., Է 14)՝ իմացէ՛ք:

Գրաբարյան բազմաթիվ բառակապակցություններ ու դարձվածքներ լեզվի պատմության ընթացքում անցել են լեզվի հաջորդ փուլերին և հասել են մեզ, ինչպես, օրինակ՝ աղօթք անել, անգուսակ թողնել, աւեր դառնալ, արգելուած պտուղ, բարելոնեան աշտարակաշինութիւն, գայթակղութեան քար, գերի վարել, թագ դնել, թոյլ տալ, ձեռք դնել, զգոյշ լինել, լծակից լինել, երգ երգոց, յականէ յանուանէ, իսաչ հանել, խնամք տանել, խոյս տալ, խորհուրդ անել, կարող լինել, կցորդ լինել, լաց ու կոծ անել, հաշտ լինել, հաստատուն մնալ, ձեռնհաս լինել, ձեռնտու լինել, ճոքաքաղ անել, յանձն առնել, ետ դառնալ, յաւիտեանս յաւիտենից, Նոյի ազրաւ, ռիսակալ լինել, ողջ լինել, ուխտագանգ լինել, ուխտ դնել, ունկն դնել, ակն դնել, ունկնդիր լինել, պատասխան տալ, պատուէր տալ, պարտական լինել, վշտակից լինել, վստահ լինել, վրէժ առնել, վրէժխնդիր լինել, տեղի տալ, փառք տալ, փոխ առնել, քարոզ կարդալ, քաւութեան նոխագ, օրէնք դնել, օրինակ լինել և այլն:

Վերոբերյալ դարձվածքների մի մասի կազմում լեզվի զարգացման ընթացքում փոփոխության են ենթարկվել հոլովման և խոնարհման ձևերը, այսպես, օրինակ՝ աղօթս առնել – աղոթք անել, ի իսաչ հանել – իսաչ հանել, կոր ի գլուխ – գլխիկոր, զձեռս դնել – ձեռք դնել, խնամս տանել – խնամք տանել, լաց ու կոծ առնել – լաց ու կոծ անել, յանձն առնուլ – հանձն առնել, պատասխանի տալ – պատասխան տալ, վրէժ առնուլ – վրէժ առնել, փառս տալ – փառք տալ, օրէնս դնել – օրէնք դնել և այլն:

Աստվածաշնչյան որոշ դարձվածքներ վերածվել են առած – ասացվածքների և պահպանվել լեզվի հաջորդ փուլերում, օրինակ՝ ձայն բարբառոյ յանապատի (Եսայի, Խ 3, Մատթ., Գ 3, Մարկ, Ա 3, Ղուկ., Գ 4, Յովհ., Ա 23), ակն ընդ ական, ատամն ընդ ատաման (Ելք, ԲԱ 24, Ղեւտ., ԲԴ 26), ձեռքերը լուանալ եւ մի կողմ քաշուել (Մատթ., ԲԷ 24), ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի (Ղուկ., Զ 44), բազումք են կոչեցեալք, եւ սակաւք՝ ընտրեալք (Մատթ., ԲԲ 14), ձայն բազմաց ձայն Աստուծոյ և այլն:

Վերոհիշյալ շարադրանքից կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին՝

ա) Դարձվածքը երկու և ավելի բառերից կազմված բառակապակցություն է, որն ունի փոխաբերական իմաստ:

բ) Դարձվածքների մեծ մասը նախ կազմավորվել է ժողովրդախոսակցական լեզվում և ապա օգտագործվել Աստվածաշնչում, ինչպես, օրինակ՝ ակն դնել, երկիր պագանել, ի կիր արկանել, ի մտի դնել և այլն:

գ) Քիչ ենք հանդիպում մարմնի մասերի անուններով (ակն, գլուխ, ձեռն, ոտն) կազմված դարձվածքների, որոնց գործածությունը հետագայում ավելի հաճախակի է դառնում:

դ) Գերակշռում են բայական և գոյականական դարձվածքները:

ե) Բարձր հաճախականություն ունեն երկանդամ դարձվածքները:

զ) Դարձվածքների կազմում կարևոր դեր են խաղում նախդիրները:

է) Աստվածաշնչյան բազմաթիվ դարձվածքներ փոխանցվել են լեզվի հաջորդ փուլերին և հասել են մեզ, օրինակ՝ գլուխ գործոց, երգ երգոց, երկիր ավետյաց, հավուր պատշաճի, գերի վարել, ունայնություն ունայնությանց, սրբություն սրբոց, ձայն բարբառո հանապատի, քավության նոխազ, բարեխոսյան աշտարակաշինություն, խղճի մտոք, բնաջինջ անել՝ լինել, լծակից լինել, գրավ դնել, ավետիս տալ, ձեռնամուխ լինել, ձեռներեց լինել, հանձն առնել, օրինակ լինել, օրենք դնել, ծնկի իջնել, դաշինք կռել, իրավունք տալ, հովանի լինել, խնամք տանել, խույս տալ, խորհուրդ անել, հականե հանվանե, աչք դնել, պատասխան տալ, սրտաբեկ լինել, վշտակից լինել, տեղի տալ, փառք տալ, ուխտագանց լինել և այլն:

ФРАЗЕОЛОГИЗМЫ, ИСПОЛЬЗОВАННЫЕ
В ДРЕВНЕАРМЯНСКОМ ТЕКСТЕ БИБЛИИ

ТОСУНЯН Г. Б.

Резюме

В составе фразеологизмов в роли главного члена чаще всего выступают существительные, а в роли подчинительного члена – глаголы. Большею частотностью употребления отличаются двухчленные фразеологизмы. В составе фразеологизмов важную роль играют предлоги. В Библии не так часто встречаются соматические фразеологизмы, которые в дальнейшем получили распространение в древнеармянском языке.

Многие словосочетания и фразеологизмы, использованные в древнеармянском тексте Библии, благодаря произведениям литературы дошли до наших дней.

PHRASES IN OLD
ARMENIAN DISCOURSE OF THE HOLY BIBLE

G. TOSUNYAN

Abstract

A phrase is a combination of two or more words that has a figurative, indirect meaning. Phrases were first used in folklore, spoken language. Soon the phrases were integrated into literary language through their gradual use in literature. The biblical phrases were introduced into the Armenian literary language in this manner, and are used until now. Phrases mostly consist of nouns and verbs. In Old Armenian language (Grabar) prepositions were an imperative part in the construction of phrases.